

ՃԵՆՆՊԵՐՀՈՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՍՏԱՆՈՒՄԸ.

Գ. Ը. ՅԻՀԱՆՍԱՎԵՐՆԻՑ ՀԱՆՆԵՐ.

1842 թ. Ի. 12 09. ՈՍՏՈՍԻ.

ՄԱՂԱՐԹՈՒ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՅՔՈՒՄԸ:

(Շ-Դ-Է-Ի-Ի-Ի-Ի)

Աղօթքս վերջացնելէս յետոյ կամեցայ զուրս գալ որջէս, կծկուած՝ կարկամացած՝ ոտներս չէին զօրում կանգնիլ: Ակսիցի ճմուռ, մերսել ոտներս երկար ժամանակ և զետնին ստէպ ստէպ զարկել, մինչև որ հազիւ հազ անդամալուծի նրման յենուած զաւազանիս վերայ կարողացայ տեղէս շարժիլ ու կաղ ի կաղ վայր իջանել լեռնէն, շատ անգամ սահելով, հազիւ հազ հասայ արահետ ճանապարհին: Ինչ երկարացնեմ՝ որդի, շունչս բերանս եկաւ, երբեմն կաղ կաղ, երբեմն նստելով առ ի հանգստանալ, երբեմն մի ոտով, երբեմն միւս ոտով, էս փափուկ տեղէն էն փափուկ տեղն ուստուտելով, հասայ մի սառնորակ աղբիւրի, նախ երեսս՝ ձեռներս լուացի, քանի մի անգամ կարի զժուարութեամբ ծունրներ կրկնեցի, և ապա ոտներս զրի սառը ջրի մէջն ու սկսեցի բարձր ձայնով աղօթքներ երգել: Ի վերջոյ Աշխարհ ամենայն երգն էնպիսի արտասուախառն, որ յոյսս վերակենդանացաւ, արիացայ, ոտի կանգնեցի ու սկսեցի շարունակել ծանր քայլերով ուղիս: Փոքր ինչ ընթանալէն յետոյ միտքս ընկաւ զուլպաներս քանդել և նրա թկերովը տերեւներ կապել տրեխի նման ոտներիս վերայ: Արդարեւ սա խելացի հնարք եղաւ:

Թեքեա կէս օր լինէր՝ այն ինչ յանկարծ շների հաշալոյ ձայն հասաւ ականջիս: Աանգ առի՝ ուշադրութիւնով ունկնդրի խմանալ ո՞ր կողմէն է գալիս հաշալոյ ձայնը, էն կողմը շարունակեցի քայլերս: Մի լերան նման բարձր բլուր էր, նրա կողքովը շուռ եկայ, հասայ գագաթէն փոքր ինչ ներքեւ, աչքիս առաջեւ բաց ելաւ մի խոտաւետ հովիտ. մէջովը կհոսէր յորդ՝ վճիտ ջուր, և նոր ի նորոյ կիջանէր նրա մէջը ոչխարի հօտն, և հովիւն ու հովուիկն յետերնուն՝ շատ շներ կհետեւէին հօտին: Շներ ասելով չմանաս թէ հասարակ շներ էին, ոչ, այլ ի վերուստ ինչպէս երեւում էին ինձ, ամէն մինը մի մի աւանակի խոշորութեամբ, արդէն սրանց ահն ինձ զարհուրացնում էր՝ երբ մոտաձում էի ինչպէս մերձենամ հովիւներին: Ասիս բազմեցի մի ժայռի կողքում, նոցանէ անտեա մնալով, ուստի լաւ լաւ նրբութիւնով կնայէի տեսնել նոքա վերջն ի՞նչ են անելոյ: Զօտը թափվեց գետակի վերայ ջուր խմել, մեծ հովիւր սկսեց չոր ու չփ ժողովել, կրակ վառել, յետոյ գնաց աղբիւրի վերայ երեսը լուաց, շուռ եկաւ զէպի արեւելք, խաչակնքեց երեսին, քանի մի անգամ ծունր կրկնեց, մօտը կանգնած աւանակի վրիցը խորջնջ վայր բերաւ, բացեց, հացի կպոցը հանեց, բաց արաւ, փռեց զետնի վերայ, մինչև հովուիկն էլ կաթը կթեց սանի մէջը, զրեց կրակի վերայ, վերադարձաւ աղբիւրի վերայ ձեռներն՝ երեսը լուաց, միւսի նման աղօթեց, եկաւ հովիւի հետ նստեց հաց ուտել, և շները շրջապատեցին նոցա՝ թաթերի վերայ, ոտի վերայ, թեկն ընկած կամ պարկած: Աս անօթի,

անուժ և ջնայելով վիթխարի շներին, սկսեցի քայլ առ քայլ՝ մեղմիկ վայր իջանել բլուրէն, և յանկարծ ոտիս տակէն մի բոլորակ քայր վայր գլորուեցաւ, դնաց ընկաւ հօտի մէջն, ոչխարները խրանեցան, ցրուեցան, ես էլ անմիջապէս մի մեծ վէմի տակին զաղուեցայ. շները կատաղած, հաշկով դէս ու դէն վազեցաւ սփռուեցան, մեծ հովիւր վեր թռաւ տեղէն, էս կողմը էն կողմը նայեց, նայեց, ոչինչ նշմարեց, վերադարձաւ սեղանի վերայ բազմեց, բայց ուշը միտքը չորս կողմն էր տարածած: Երդէն հովիւների խաչակնքելէն միամիտ էի նոցա բրիտանոնայ լինելն և ինձ չէն զլանալ հիւրընկալութիւն, վասն որոյ առաւել ևս վստահութեամբ այժմ քայլերս փոխեցի, միշտ հանդարտաքայլ դէպ ի վայր իջանելով՝ վերջապէս երբ փոքր ինչ մօտեցայ, խորամանկ հնարքի ձեռնամուխ եղայ: Արանք նստած էին մի շրթունքաւոր քերձի տակին, ուր և բղետմ էր յորդահոս աղբիւր, և ես որպէս թէ նոցա զլնի վերան էի կանգնած, բայց անտեսանիկ նոցանէ և շներէն: Աւեր առի մի քար, որքան ուժս ներեց ինձ՝ ձգեցի նոցանէ բացակայ՝ ոչխարների մէջն: Արը ոչխարները վրդուեցան, ցրուեցան, շները կրկին յարձակուեցան կատաղաբար դէպ ի հօտն, ուր քարը վայր էր ընկել, հեռի — հեռի հովիւներէն: Այս ժամանակն ես դուն զործեցի փութով երեւալ հովիւներին, երեսս խաչակնքելով և շտապեցի միանալ նոցա հետ: Այս հաղաղին շների մինը հեռուանց նշմարեց զիս, սաստիկ յարձակուեցաւ վրէս, բայց երբ մերձեցաւ, հովիւը հայհոյելով՝ զայրանալով շանը վրէն, ձեռի հաստ ու երկար ցուպը ցոյց տալով, կանգ

նացրեց ինձանէ հեռի և ձեռով նշանացել արեց ինձ՝ ձեպել մերձենալ ինքեան, և ես ծիզն արի վայր սահեցայ, մօտեցայ նրան՝ որ զիս քամակին ձգեց, տարեց հացի սեղանի մօտը բազմացրեց, աչքերը չռեց վրէս ու հարցրեց ի՞նչ տեղաց եմ գալիս: Այս դողդողալով կրցկրտուր պատասխանեցի, «Շուշի բերթէն, շատ քաղցած եմ՝ խնդրեմ՝ ի սէր Աստուծոյ պատառ հաց ուտացնէք ինձ»: Բարի հովիւն քամած մածուն հանեց տօպրակէն, հացի վերայ քսեց, զրեց առաջէս չորս հինգ մեծ մեծ լաւաշների հետ և մին կտոր էլ պանիր, կրկին տօպրակէն մածուն հանեց, ածեց սանի մէջն, սկսեց փրթոշ շինել և անմիջապէս հրամայեց հովուիկին գնալ շուտով կաթը կթել բերել: Շները թէ ի հեռուստ և թէ ի մօտուստ զիս տեսնելուն պէս՝ մին զմինի քամակէն վազելով էնպէս կատաղաբար յարձակուեցան ու շրջապատեցին մեզ, որ հովիւները ցուպի ուժով հաղիւ կարողացան փոքր ինչ հեռացնել ինձանէ: Երգարեւ հեռացրին, բայց դարձեալ շները հանդարտ չէին, ոմն կանգնած, ոմն պպզած, այլք պարկած դնելնին թաթուշների վերայ զրած, մերթ հաշում, մերթ մերթմըրթում, մերթ կօնկօռնում՝ մամուռմ էին ու նայում ինձ ու հովիւի գէմբին և աչք ձրդում ստէպ ստէպ նորա ցուպի վերայ: Աինչ այս մինչ այն՝ հովուիկը բերաւ սանով եռացրած կաթը՝ զրեց առաջէս և սկսեց հաց փրթել սանի մէջն: Այս ժամանակն հովիւն տեսնելով շների փոքր փոքր մեզ մօտենալն, մին կտոր հաց տուեց ու ինձ հրամայաբար առեց, առ էս ձգէ Անիկին, մատնացոյց անելով մին շանը՝ որպէս զի, աւելացրեց, շուտով բարեկամանայ

քեզ հետ, տեսնումեն սատկածը ինչպէս է մոթմոթում վրէժ, նա ամենի վերայ վրտանդաւոր կենդանի է: Հացի պատար ձգեցի Աւիկին, միւս կողմէն Մթոտը փութացաւ, վեր առաւ լափեց, ուստի նոցա մէջը կռիւ ընկաւ և հետևաբար միւսներն էլ նոցա խառնուեցան ու մին զմինի վերայ յարձակուեցան, կռիւն հասարակական եղաւ, սասակացաւ, մին զմինը խեղդմեղդեցին վայրագաբար, ուստի հովիւները պարտաւորեցան ցուպով նրանց անջատել քանի մի վայրկեան միայն, ըստ որում Հաբուլդին, Մարդակոխն, ու Մարջանը որպէս թէ միանալով՝ յանկարծ յարձակուեցան Աւիկի վերայ, բայց սա միայնակ բոլորին յաղթեց, մինը աստ, միւսը անդ տակը կռիւով, զեանաւարած անկողով, խեղդմեղդելով ստիպեց նրանց մնկմնկալով խուսափել անտէ: Երբ ես կշտացայ, հովուիկը մնացածը՝ աւելացածը ինձանէ փրկոչէն և փրկած կաթնէն ածեց կեծակ և փորատ լսկոտաների առաջ և ինքը ցուպը ձեռքին կանգնեց, մինչև նոքա կերան վերջացրին, վերադարձաւ հացը օրհնեց ու ժողովեց, մենք էլ երեսներս խաչակնքեցինք, մինը զմինի դուխ իջացրինք ասելով Ըստուած Բարաւապ տայ:

Հովուը զրպանէն հանեց մի թզաչափ վարունիկ նման կաւից շինած մի բան, որի մի ծայրը բարակ էր, իսկ միւսը փոքր ինչ հաստ: Հաստ ծայրի վերայ երկու մասնուցաչափ ծակ էր շինած և էս ծակէն խողովակ էր հանած մինչև բարակ ծայրի դուխը: Նոյնպէս ծոցէն հանեց ծխախոտ, մանրացրեց բռան մէջը, լքցրեց մասնոցի նման ծակի մէջը, հովուիկն էլ վաղեց երկու մասնով կրակ բերաւ զրեց ծխախոտի

վերայ ծակի բերանին, հովուը սկսեց ծխել փոքր ինչ և ապա ինձ համեցէք անելով ասեց չէ՞ք: Կը քաշէս: Ես շնորհակալութեամբ մերժեցի նորա առաջարկութիւնը, որովհետև նոր մի բան էր էն ինձ համար: Հովիւն այնուհետև մի բառականին մեծ քար շարժեց աջ ձեռքով, ինքեան մօտացրեց, թեկն ընկաւ նրա վրէն ու ասեց իւրեանց լեզուով, որիցն էսքան միայն հասկացայ թէ, աստ այժմ տեսնեմ ինչ անցքէ պատահել քեզ և ինչպէս են պլոկել քեզ:

Ես սկսեցի պատմել Հուշի բերդի մէջը պատահածները: Պատմում էի, բայց հովուի կերպարանաց վերայ ոչ ինչ զգացողութիւն կամ կարեկցութիւն չէի նշմարում, յորմէ զուշակեցի որ իմ հայերէն խօսարէն նա ոչ ինչ չէ հասկանում, վասն որոյ հարց արի, եղբայր՝ թուրքերէն զիտն: Նա պատասխանեց, այո՞ զիտեմ: Աւրեմն, կրկնեցի, աւելի լաւ է թուրքերէն պատմեմ, ըստ որում նկատումեմ որ իմ հայերէն լեզուն քեզ անհասկանալի է: Հովուիկը միւս կողմէն ասաց, էն վանքը, ես ոչ ինչ չէի հասկանում: Հովուը ծիծաղելով աւելացրեց, էն Մորանն ես էլ ոչ ինչ չեմ հասկացել:

Պրկնեցի ասածներս յուշիկ և պարզ թուրքերէն լեզուով, նշմարեցի որ հովուի վայրենի դէմքի վերայ նկարագրում էր երբեմն զարմանք, երբեմն կարեկցութիւն, երբեմն ուրախութիւն, երբեմն ցասում: Նա որքան կոպիտ՝ ահարկու կերպարանք ունէր, էնքան էլ նորա գլխին դրած համարեա մի ոչխարի մորթէն կարած ահազին գդակն աւելի ևս վայրենի էր ներկայացնում նորան, այսու ամենայնիւ մի վհահանձնութիւն կամ լաւ ևս ասած՝ այրական

դէմքին վերայ (նորա հովուութեան կոչմանը կամ յատկութեան աստիճանի համեմատելով) քաջութիւնը կը ցոլար իւր շարժողութեան կամ խոկուն նայուածքի մէջ մանաւանդ նրա երկար, լայն, թաւ սև յօնքերի տակիցը, նրա պատառի առած սև սաթի նման մորուսի վերան, մեծ մեծ կովի աչքերի նման աչքերը, որ էս կողմն էն կողմն շրջմըջելով փայլում էին բարկանայոց կամ կարեկից լինելոյ ժամանակը, էնպէս մին վայելչութիւն էին տալիս նրա դիմացն, որ որպէս թէ անհեթեթ, բայց խորհրդաւոր կուռք էր տարածուած գետնի վերայ: Իսկ հովուիկն, որ հազիւ 16—17 տարեկան լինէր, բայց հասակի բարձրութեան և կուրծքի լայնութեանը նայելով, կասէիր 20 էն աւելի է, երեսի վերայ քնկած կանաչ դալար խոտի մէջին, երկու ձեռներն ինչպէս զոյգ սիւններ դրած դնչի տակին, պըլըզտրած և փողփողուն աչքերը, էն գեղջուկ աղու՝ շնորհալի և անխռով, բայց կծու կերպարանքի մէջին, լռիկ մեջիկ, ամենազգոյշ մտադրութեամբ ուշադիր էր իւրաքանչիւր իմ արտաբերեալ բառերին: Հովուն էնպէս չէր, այլ մերթ բարկութենէն շուռ մուռ էր դալիս գետնի վերայ, մերթ գլուխն էր երերում, մերթ ուրախութենէն էին ժըպտում նորա հաստ՝ արեակէզ շրթունքներն, և էս ամենը նշան էին թէ նա ուշադրութիւնով էր ունին դնում ինձ: Արբ պատմում էի Շուշի բերդի մէջին Հայերի թաղումը մին Հայի ինձ մերժեղ իւր տանը գոնէ մի գիշեր պահել, Բէգլարը (էս էր հովուի անունը) յանկարծ նստեց, հրամայեց, Հաթամ, Հաթամ մի կրակ բեր: Արբ հովուիկը կնծակի նման վեր թռաւ տեղէն, երկու մատներով կրակը բերեց դրեց նորա

դէմքին, աւելացրեց, Բէգլար՝ ապէր էն վանքը, սրան պիտում մին պնն (բան) արած: Բէգլարը գլխով նշանացի արեց նրան տեղումը նստել և լռել, և ինձ մի և նոյն ժամանակը ասեց՝ վերջացրէ պատմութիւնդ: Աս ևս հասցրի պատմութիւնս մինչև բերթէն դուրս գալս — էստեղ կարծառօտ անցկացայ, հետեւաբար, սկսեցի ոտներիս մոմալոյ վերայ խօսել, և ահա հովուն ասեց, Հաթամ, Իոթլինը մօտացրէ ինձ: Հովուիկը նրա հրամանը կատարեց, Բէգլարը Իոթլինէն հանեց մի կտոր արևիացու կաշի, նայեց — նայեց ոտերիս, հանեց զրգանէն դանակը, կաշին կիսեց, ծակծակեց, թելեր ծոցէն հանեց, անցկացրեց ծակերէն ու տուեց ինձ ասելով, հագէ տես նենք՝ լաւ է գալիս ոտիդ: Հագայ, արդարև լաւ էր, ինքն էլ ձեռնով, մատներով ոտիս էս էն կողմն հոգի տուեց, հարցրեց, չէ՞ արդեօք ցաւացնում այն ինչ լսաւ ինձանէ, ոչ բառս, միւս կտոր կաշին սկսեց միւսի նման կարգի բերել ու տուեց ինձ, էն ևս հագայ, կրկին նա ևս փորձեց, նկատեց լաւ է, ասեց, դէ՛ ալ ժամ արի նոր ի նորոյ խօսենք քո զլինն եկած անցքի վերայ:

Աս արդէն վերջացրած էի պատմութիւնս, վասն որոյ և լռեցի քանի մի ըովպէ, իսկ նա տեսնելով լուրթիւնս, սկսեց հարցնել առաջարկել ինձ, այս ինքն Շահլի, նորա պալատականաց, զօրքի և այլն և այլն անձանց, կառավարութեան վերայ, որոց ես ևս ինչ գիտէի կամ անկամ էի՝ նրան պատմելի: Ի վերջոյ նա աւելացրեց, բարեկամ, մեք զեղացիքս էս խոշորիկ և վայրենի կեանքովն՝ աւելի բախտաւոր ենք քան զքո շահն ու նրա դռան մեծամեծներն, — մեք ոչ էն փառքը կուզենք և ոչ էնպէս

անարգութեամբ սպանուիրն. ես իմ հազարաւոր ոչխարների վերայ հրամայիրն չեմ փոխիլ քոյ հազարաւոր ձիաւորների վերայ հրամանատարութեան հետ: Իշխան, թագաւոր ու անիրաւ. . . . ինչի՞նչ. . . . ուրեմն ժողովուրդն ու սպասաւորներն ունին իրաւունք մորթել նրան. . . . թէեւ էս իմ խելքի բան է, բայց նրանք ոչ թէ իշխան կամ շահ են սպանել, այլ անիրաւութիւնն են խողխողել: Իմ փրկութիւն աւելի համեղ է քան զթէ մեծամեծ խանների իշխանների համադամ կերակրեղեններն, և իմ հօտը աւելի բարեբախտ է ձեր ժողովուրդէն. . . . արի՛ արի՛ հովիւութիւն արա՛ մեր հետ՝ էս կանաչ՝ սիզաւէտ ծաղկունքներով լեքն ձորերի մէջին, վճիտ և սառը աղբիւրների մօտը, հով — զով անտառներումը, բարձր սարերի վերայ կացիր առ ժամանակ, թէ հաւանեցար՝ շատ բարի, թէ ոչ, կրկին կարող ես վերադառնալ էն տեղ, ուր օրը կէսօրին քեզ պոկկել են ու աչքիդ առաջը կայքդ յափշտակել ու բաժան — բաժան են արել և այժմ փառք ետ տալիս Աստծուն, որ քեզ չեն սպանել: Այս խորին լռութեամբ ունկն կը դնէի, և նրա առաջարկութեանն ոչինչ պատասխան չէի տալ, այն ինչ ևս կրկնեց հարցումն թէ, մտազի՛ր եմ արդեօք քնալ նոցա մօտ: Այս կըմկըմկով պատասխանեցի, դեռ ևս ինքս էլ չզիտեմ թէ ինչով է վերջանալու իմ ապագայ վիճակը. միայն էս եմ վճռած առ այժմ, որ գնամ ուր ուրեք առ ժամանակ ծածկուիմ, մինչեւ էս շփոթ և աղմուկն տեսնեմ՝ ինչպէս է վերջանում: Հովիւն քանի մի ըովպէ մտածմանց մէջ խորասոյգ և զաւ, և ապա հարցրեց, էլ ի՞նչ շփոթ, շարը սպանուեցաւ և ամենայն ինչ վերջա-

ցաւ: Միթէ՞ չա՛հ մեռելը, պատասխանեցի, Պարսկաստանի մէջն, առանց խառնակութեան կը մնայ երկիրն: Վաւ լիցի: Մինչ մինն ինքեան չա՛հ խոստովանացնելը, ճանաչացնելը, բիւրաւոր մարդկանց արեւներ կը թափվին, շատ քաղաքներ, աւաններ, գիւղեր հող ու մօխիւր կը դառնան.

Յանկարծ ընդմիջեցին մեր զրոյցը շների միասին հաչալն ու դէպի իմ եկած կողմը նոցա վազելն, յորմէ ոչխարներն էլ սկսեցին տեղէն շարժիլ, խառնվիլ, դրպէս թէ զազանէ են ահաբեկուած: Հովիւները ըտտապելով շները քամակներնու մն ձգած՝ բարձրացան բլրի կէսն, էս — էն կողմը նայելով, ոչինչ չնշմարեցին, վերադարձան, հօտը ժողովեցին ու տեղէն շարժել տվին: Եւ տեղ Վեղարն պսեց ինձ, հողի (ջանրմ) ձշմարիտ ասիր, խառը ժամանակ է, աւելի շուտ է արահետ ձանապարհէն փոքր ինչ ևս հեռանանք, որպէս զի անցաւորները քո նման մեր շների ձենի վերայ չդան՝ մեզ չգտնեն, ամենայն եկող տկ՛որ ու քաղցած չի լինիլ քեզ պէս:

Նազաքայլ բարձրացանք դէպի վեր մին բարձր լեռան՝ մինչև որ արեգակն սկսեց շուտ դալ դէպ ի արեւմուտք, երբ և վայր իջանք մի ձորի մէջ, ուր կար աղբիւրիկ: Աստեղ հօտը փարախուեց և մեք էլ երբ մէզը պատեց երկիրը, բոլորուեցանք աղբիւրի մօտը առ ի ընթրիլ: Վեղարը շուտ շուտ գլխս ստիպում էր հաց ձգել շներին: Հայրիւրով, երեսներնիս խաչակնքելով սկսեցինք և աւարտեցինք ընթրիքը ու պտորատուեցանք քնանալ: Հողմը գնալով գնալով կը սաստկանար, օղը կը դովանար և ցուրտը կաղդէր իմ վերայ, ուստի ու մտմտալով

որոնեցի՝ զտի մի քար երկար և բարձր քանի մի կանգնաչափ, որպէսզի մէջքս դէմ ձգեմ նրան, մարմինս դնէ պաշտպանութի հողմի փշերէն: Ասկ հովիւը քանի մի շներ քամակին ձգած, գնաց շուրջ տուեց հօտի շորս կողմը, վերադարձաւ ձեռքին մի կարպետ, ասեց, առ հագի, էս էլ քեզ զիշերուան համար, սրա կէսը ամիզ և կէսը վրէժ ձգէ, չմոես, էսպէս տեղը Աստուած ինչ որ պարգևել է՝ նրանով պէտք է բաւարանանա՞նք: Այս ի հարկէ շատ շնորհակալութեամբ ընդունեցի նրանէ կարպետը ու հնաւեցայ նրա խրատին: Հովիւը քանի մի անգամ երեսին խաչակնքեց և չզիտեմ ինչ աղօթք էր փնթփնթաց, ու իւր ծածկոցն՝ որ էր մինչև առի նման բան, կռների տեղն ծակած, մտաւ նրա մէջն, զըլուխը դրեց մին ժայռի վերայ, պարկեց: Հա՛թամբ դեռ ևս լսկոտների հետ կիսաղար, այն ինչ Մէգլարի խումփոցն սկսեց խկ ևս ծնկներիս, ոտներիս մոմուպէն անհանգիստ էի և չէի կարողանում քնանալ: Մինչ այս մինչ այն՝ Հա՛թամբ էլ պարկեց քնանալ, խկ ևս զարթոււն էի և կմրտածէի անցեալ, ներկայ վիճակին վերայ և ապագայն յանձնում էի Աստուծոյ կամացն: Արեւի է կէս զիշեր լննէր, այն ինչ հովիւը զարթեց, շներէն մին քանիսը հետը գնաց պարտեց հօտի շորս կողմը, վերադարձաւ լուռ մունջ կրկին պարկեց իւր տեղը ու շուտով նրա խումփոցի ձէնը լսելի եղաւ, որի համար ևս կը նախանձէի: Այս զիշերէն շատ շատ անց էր՝ ևս զարթոււն էի, և չզիտեմ որքան մնացած կը լննէր լուսածաղին, որ թմրութիւն էր եկած վրես, մրափել էի: Մի քիչ փորձած է, նա կարող է զգալ թէ, ինչ ասել է փափուկ անկողնէն զրկուել

և էսպիսի՝ լերկ՝ չոր գետնի վերայ քնանալ:

Միւս օրն առաւօտեան նիզակաչափ արեւը հորիզոնէն բարձրացած կը լննէր, երբ անքերտ բաց արի, այս այն կողմը նայեցի, ո՛չ հօտ և ո՛չ հովիւներ կային, վեր թռայ տեղէս, ահով զոզով բարձրացայ մի բլրի վերայ, շների հաչին ու Հա՛թամբ թուրթակի ձենի վերայ գնացի — գնացի և ահա երեւցաւ հօտի ծայրն, միամտացայ, վերադարձայ աղբւրների վերայ ձեռներս՝ երեսըս լուանալէն յետոյ, քանի մի ծռնի կրկնեցի, ջերմեանդ աղօթեցի, քանի մի արտասուեք էլ թափուեցան աչերէս, ապա շարունակեցի ընթացս դէպի հօտն: Մէգլարն, բարի Մէգլարն (զոր հեռուանց նըշմարեցի) շուտ շուտ յետ են նայում (ի հարկէ իմ ճանապարհին էր սպասում), երբ զիս տեսաւ, ձայնեց, շները քովը ժողովեց, սաստեց ու զիս նշանացի արաւ ձեռնով չերկնչել, այլ շտապել: Հասայ նրան, բարի լոյս ցանկացի, նա սկսեց ծիծաղել ու հարցնել չվախեցայ արդեօք միայնակ տեսնելով զիս աւելացրեց, քաղցր քնէդ զարթացնել չուզեցի, վասն այն թողի քեզ քնած: Հարցրեց նոյնպէս տրեխներէս՝ ոտներէս և թէ ինչպէս եմ զգում զիս: Այլ այսպէս խօսելով անցեալ՝ ներկայ անցքերէն, հասանք մի գետտիկ տփն, ուր նախաճաշիկ առնելէն զինի, կրկին բարձրացանք դէպի վեր լեռուն, անտի դէպի կթատեղին, ուր, որպէս ասեց նա ինձ, իւրեանց գեղացիք գալոց էին ոչխարները կթել:

Մինչ այս մինչ այն՝ քանի մի մանր բլրուրներ պոռոյտ տուինք և ահա բացուեցաւ առաջերնուս ընդարձակ և այգեկտ դաշտ, որի միջով կը հոսէր բաւականին յորդ գետ

և նրա աշխուժմը մի բլրակի ապակին քսանա-
չափ այր և կին մարդիկ կերեւէին: Հովու-իկն
որ հօտի առաջնէն ընկած էր, շուտով հա-
սաւ սպառնող մարդկանց, չգիտեմ ինչ էր
ասած նոցա, որք շուտով շրջապատեցին
նրան և հետաքրքրութեամբ ունկն կը դնէին
նրա խօսելոյն: Արեւս ու Ռէզլարը հասանք,
գեղացիք թողին Հաթումը, մեզ բոլորեցին
ու սկսեցին ինձանէ հարց ու փորձ անել
Հազի սպանուելէն: Այս սկսեցի պատմու-
թիւնս թուրքերէն, և հետ գհետէ գեղէն
կողմերը աւելանում էին ու շրջապատում
զիս մոռանալով ոչխարներ կլմէին: Աս գե-
ղացի տղամարդներ ժողովի խումբի կայ-
տստ երկաներէն ու ձօն ու պերճ հագուստ-
ներէն զուշակված էր նոցա ընչաւէտու-
թիւնն, մանաւանդ կանանց մեծաքնայ
զոյնզոյն հանդերձները, գոհարեղէնի հետ
խառն զարդերը, արծաթեայ և ոսկեայ ա-
պարանջաններն ու ճակատանոցներն, լան-
ջանոցները և կոծակներն էնպէս շուայ-
էին, որ կասես պճնապաճոյճ հարսանքա-
ւոր էին, երբէք ինձ չէին պատահած էս-
պիսի հարուստ գեղացիներ, և աւելի կը
զարմանայի նոցա կանանց, օրիորդների,
տղամարդների և երիտասարդների խառն ի
միասին ընտանեբար խօսելն ու շրջելն: Աս
երբ կը պատմէի կրած նեղութիւններս, կա-
նանց շատը կարեկցութենէ կարտասուէին:
Ոոցանէ մինը հանեց գոտիէն մի մեծաքսեայ
թաշկինակ՝ պարզեց ինձ ու ասաց, առ՝ առ
էս կը քայր, փաթաթէ գլուխդ մինչև գրակ
բերել տանք քեզ համար գեղէն, մի և նոյն
ժամանակը հրամայեց մի պատանւոյ թէ
գնա մեր տուն, ասա՝ Ասգուլին այս ինչ
(մոռացել եմ) որդւոյս նոր կապեն ու թիկ-
նոցը (արխայուղը) տայ քեզ, բեր շուտով:

Հաղցներ էս տկոր, տարաշխարհիկ հիւ-
րին: Մի ուրիշ կին ապսպարեց նոյն պա-
տանւոյն իւրեանց տանէն գրակ առնէ բերէ:
Մի տղամարդ էլ յանձնեց իւրեանց տա-
նէն մի զոյգ կօշիկ բերել: Ռաց ի էս ապս-
պարեղէն՝ քանի մի տղամարդիկ աւելացրին
ապսպարելն կերակրեղէն, զինի՝ ցքի եայլն
եայլն: Պանայք երբ խմացան ևս ընտա-
նեաց տէրեմ, զաւակ ունիմ (ի հարկէ ես
չէի կարող ասել մահմեդական են), և ես
կարեկից լինելով ինձ, նստացրին ինձ մի
սպառաժ քարի վերայ և ինքեանք
ծալբատակ առաջնս գետնի վերայ բազ-
մեցան ու խնդրեցին, որպէս զի նոր ինորոյ
պատմեմ նոցա որտեղացի եմ ես, ծնողքս
կենդանի են արդեօք, կամ խորին պարսկաս-
տանի մէջն շատ Հայեր, ինչ վիճակի մէջ
են նոքա, Պարսիկներն ինչ աչօք կը նա-
շեն նոցա եայլն եայլն: Մի և նոյն ժա-
մանակն հրամայեցին օրիորդներին գնալ և
կթիլ հօտը՝ իւրաքանչիւրի ոչխարի կաթը
տիրոջ մաշնակի մէջն: Աս տեղի օրիորդները
էին կայտառ, կարմրերես և բաց ամենից
հետ: Վոքա ունէին գլխերնումն մորթեայ
զգակներ և նրանց չորս կողմն կախած ոս-
կեայ և արծաթեայ զանազան տեսակ զք-
րամներ, իսկ ուսերէն գունակ գունակ նա-
րոտներ մինչև գոտկատեղն պճնացրած:

Գեղէն շարունակ տղամարդիկ և կա-
նայք զալով — զալով կաւելանային, և ահա
հասին գեղը քահանէն և մեղքն (տանու-
տէրն), սոցա քամակէն և հագուստս, որով
ինչպէս նորափեսայ զարդարեցին զիս, և
մին պառաւ կին նշանացի արեց, գնացի
քահանայի աջն համբուրեցի: Մեղքն կըր-
կին կրկին լուրեր ինձանէ իմանալէ յետոյ,
հրամայեց բոլորին, որպէս զի ամենայն ոք

իւր զրահները մաքրէ, պատրաստէ և կարենոր եղած ժամանակն դուրս գան առ ի պաշտպանել իւրեանց ընտանիքն ու կայքը: Վանի մի առոյգ և թիկնաւէտ երիտասարդներ վէս և անպատուժ ժպիտով ձայնեցին, Աստուած տայ մի էդ օրը տեսնէ ինքը, մեր զրահները անգործութենէն ժահաւար եղան: Վահանայն խաղաղաւէտ և անթերի պարզութեամբ կցեց, չէ որդիք, մի ցանկանայք այն օրին, տացէ՛ Տէր երբէք զործ չածուին ձեր զրահները . . . :

Երիտասարդները ընդհատեցին նորա խօսքը երեսերնին շուռ տալով, մոռութիւնին քաշտուած փսփսալով և մոռութիւնութալով քանի մի քայլ հեռացան ի նշան իւրեանց անբաւականութեան: Մինչ այս մինչ այն՝ բերին զեղէն ուտելիք, ոմանք գլխին դրած, ոմանք քամակին և ոմանք ձեռքումը բռնած, երկար ու մէկ սեղան բաց արին, ամենայն բարութիւն շարեցին վրէն, շարուեցան չորս կողմը աղամարդիկ և կանայք խառն ի միասին որպէս մի գերդաստուն, իսկ օրիորդներն ու պատանիները կրսպասաւորէին մեզ: Վահանայի աջ կողմն եւ և ձախակողմն մեկիւքն էր բազմած: Իմ բարերար Բէզլարն ու Հաթիմն իւրեանց բաժինը ամենայն ուտելիքէն առատութեամբ առին, հետո շատ սիրով մնաս բարեւ արին և ես իմ շնորհակալութիւնս մատուցի նոցա, նոքա էլ քշեցին իւրեանց հօտը, վերադարձան ուստի որ եկած էին:

Անր ու խումն երկար տեւեց, ի վերջոյ սկսեցին իւրեանց բարբառովը (զոր շատ փոքրը կհասկանայի ես) խորհուրդ անել զիս առաջնական կարօղ են թէ ոչ: Վահանէն ու մեկըքը յայտնեցին ինձ իւրեանց վճիռը, թէ չեն կարող զիս պահել պահ-

պանել իւրեանց զեղումն, ըստ որում գեղատէրն է թուրք և շրջապատած են ևս թուրքերէ, և թէ, եթէ նրանք իմանան Հահի զօրականներէն պահած են իւրեանց մէջը, մեծ ֆնաս կհասցնեն ինքեանց, ուստի աւելի լաւ է գեղը չըմտած գնամ եւ Տաթևի վանքն, ուր կարելի է առ ժամանակ մնալ, մինչև հանդարտուի էն կողմերն, և թէ, կտան ինձ մի քաջ երիտասարդ առաջնորդ, որ տանէ զիս հասցնէ վանքն:

Երեկոյեան պահ էր՝ ներկայացաւ մի զրահաւորուած՝ առոյգ՝ բարձրահասակ երիտասարդ, ձեռն երկաթադամ ցուպ, քամակին հացի մեծ կապոց, հրացանն ուսին, առաջնակը կողքումը ցցուած դօտկի մէջն և կանգնաչափ երկայրի սուր կախուած պորտի վերայ, մօտեցաւ քահանայի աջը համբուրեց, ասեց, *Մեկիք՝ պատրաստ եմ, ինչ հրաման ունիք:* Մեկըք որպէս զաս՝ կրկին կրկին կրկնեց երիտասարդին ինչ ճանապարհներով և ուր տանէ զիս, ուր օթագայեմք և ուր նախաձաշիկ անենք, դարձաւ և ինձ յանձնեց *Մուքիի* (այս էր առաջնորդիս անունը) խօսքէն դուրս չգամ, ուր նա զիս առաջնորդէ՝ լուռ մունջ հետեւեմ նրան, և ոչ ոքի մօտ թուրքերէն կամ պարսկերէն չխօսեմ, և աւելացրեց, *Մուքին՝ Ասիսիլեան* երկար ժամանակ մը նալով, շըհարցույ (քաղաքացույ) լեզուն լաւ կը խօսէ և կը հասկանայ, ինչպէս տէրն (տէրտէրն) ու ես: Երդարեւ քահանէն ու մեկըքը հայերէնը պարզ կը խօսէին և ես նոցա խօսիլը լաւ կը հասկանայի, որպէս և նոքա իմն:

Մեկըն իւր խրատները վերջացնելէն յետոյ, ես ևս ուսի կանգնեցայ, քահանայի աջը համբուրեցի, *Մեկըքին՝* մի և նոյն ժա-

մանակը բոլոր ներկայ եղող ասպնջականներին՝ շնորհակալութիւնս ու երախտադիտութիւնս մատուցի ազէխարշ զգացմունքով ու դառն արտասուներով, երբ կանայք խմբուեցան, միտ բերելով ի հարկէ վտարանդի և տարաշխարհիկ և վատաբախտ վիճակս, սկսեցին և նոքա արտասուել հիւսելով քանի մի եղբերդական ոտանաւորներ՝ վերաբերեալ իմ նման թափառական օտարականի, և քանի մի բերան բարձր՝ ներդաշնակ ձայնով երգեցին՝ ապրպարելով չմոռանամ նոցա, որպէս և ինքեանք երբեք չեն մոռանալոյ զիս: Աւահա՛ այսպէս ես ևս խուլ հեծեծանքով՝ տրտում՝ տարտամ և թարթափուն քայլելով հեռացայ նոցանէ, փոյթ ընդ փոյթ յետս նայելով և մնաք բարե ցանկանալով էն բարի գեղացիներին:

Արկար չքաշեց, պտոյտ տուինք մի բլուր, աներեւոյթ եղան ասպնջականներս, որք ակնկառոյց զեռ ևս կը նայէին մեզ: Ասայնուհետեւ մտատանջ և բեկեալ սրտով հետեւեցայ առաջնորդին: Շուտով պատեց մեզ աղջամուղջն: Մութին շարունակում էր ուղին ու շուտ շուտ յետ էր նայում, քանդի ես չէի կարողանում հասնել նորա մեծամեծ քայլերին: Ի վերջոյ իմ դանդաղ ընթացքէն հասկանալով նա՝ որ անկարող եմ ես ինքեան հետեւիլ, ուստի կանդ առաւ մի վճիտ ու արծաթափայլ աղբիւրի վերայ, որ մի քերցի տակէն կը բոխէր, հարցրեց թերեւ ծարա՞ւ իցեմ: Աս մերժեցի նրա առաջարկութիւնն, իսկ նա զեռնատարած եղաւ, բերանը զրեց աղբիւրի ական վերայ, կուշտ կուշտ ջուր խմեց, կանգնեց, կրկին շարունակեց ուղին: Թեւեռեալ երկու ժամ անցած կլնէր զիշերէն,

երբ զիայ առինք մի առուի ափը և Մութին բազմեցաւ համեցէք արեց ինձ ընթերի: Ինչպէս հասարակօրէն գեղացիների ընթերիքը պարզ կլնի, սորա ընթերիքն էնպէս չէր, այլ բազկանում էր ճիւղ—ձերմակ լաւաշէ, ձեռնահացէ, քամած մածունէ, պանրից, խաշած ձուից և մի գեր տապակած հաւէ: Աս չունէի ճաշակ, վասնորոյ և սեղանի քովը նստեցի: Նա ինչպէս սկսեց հաց ուտիլը հայրմերով, երեսը խաչակնքելով, էնպէս ևս վերջացրեց, ու փոքր ինչ խօսալէն յետոյ պատրաստուեցանք քնել: Աս գլխատակիս համար հաստ ու տափակ քար էի որոնում, Մութին թոյլ չուտուեց, ասելով, մեր զգակներն նրա համար են էսպէս մեծ մեծ ու հաստ, որ բարձի տեղ ևս ծառայեն մեզ զիշերները, վասնորոյ ինքն մի բարակ տափակ քար գտաւ, բերեց զրեց զլիս տակին ու ապսպարեց կապէս հանեմ, ձգեմ վրէս, որպէս զի չմրսեմ, ապա թէ ոչ, տակացրեց նա, որքան հաստ ու ծանր հագուստ ունենաս, ու հազիդ քնես, դարձեալ մրսելէն կասկած կայ, բայց երբ բարակ, որքան և լինի ծածկած, վրէդ ձգած, դարձեալ շուտով չես մրսել: Աս էս վարպետութիւնն էնքան իմ երկար ճանապարհորդութիւնների ժամանակը չէի նշմարած, բայց այժմ անկիրթ՝ կոպիտ կարծեցեալ գեղացին ինձ սովորեցրեց:

Անուշ քնիս մէջին էի՝ մի հազալոյ ձայնը զարթացրեց զիս, աչքերս բացի, տեսի աբեղակը բաւականին բարձրացած, Մութին առուի քովը պարզած էր, ես ևս դանդաղ ու իլիկ միլիկ անելով կանգնեցի, երեսս լուացի, խաչակնքեցի, բարեւեցի ու ցուպս ձեռս առի, պատրաստ եմ ասի, և հետեւեցայ նրան, այն ինչ և նա խաչակնքեց

ուղի ընկաւ: Մութին մերթ անբանուէր,
մերթ անտառներէի, մերթ թուփերի մէջի
ճանապարհով զիս կառաջնորդէր, և եր-
կու անգամ հանգիստ առինք ու հաց կե-
րանք, կէս օրէն շատ — շատ անց էր՝ այն
ինչ իջանք մի զիւրի վերայ, ուղիղ գնա-
ցինք Մութի ազգականի տունը: Որքան
ուրախութիւնով ընդ առաջ ելին մեզ էս-
տեղ մին կին չափահաս և մի նորահարս՝
որպէս երեւեր շորերէն: Շուտով մերձ
քսանաչափ կանայք էստեղաց էտեղաց
ժողովեցան Մութի զլեկն, մինը համբու-
րում էր նրան, միւսը փարում նրա շըն-
քովն, այլ ոմն ձեռներէն բռնում, անուն
անուն ազգականների առողջութիւնը
հարցնում, իսկ ևս քանի մի քայլ հեռի հա-
րուստ ժամանակ արձանացած, թիկն տը-
ւած պատին կայի, մինչև հաղիւ հազ
տանտիկինն, որ էր մօրաքոյրն ընկերիս, մեր-
ձեցաւ ինձ, հրաւիրեց լաւ փռուածքով
մի սենեակ, ու ինքը զուրս գնաց, քանի մի
րովպէէն յետոյ վերադարձաւ ձեռին մի տէ-
փուր, մէջին հաց և մեղր զրեց առաջևս
ու ասեց, քէ մատաղ, էսօր պաս է, մի խրիկ
հաց կեր՝ մինչև Ռաքէլի դալը: Իսկ և իսկ
Մութին ներս մտաւ, նստեց մօտս, ական-
ջում փսփսաց թէ մեր էսօր պաս ուտիլը
չյայտնես, ապա թէ ոչ զուրս կանեն մեզ
էս տեղաց, էս ասելէն յետոյ՝ Մութին
զուրս գնաց:

Հացը ուտելէս յետոյ, մի և նոյն տան-
տիկինն եկաւ տէփուրը զուրս տարաւ և
ևս քնեցայ շատ թէ քիչ՝ չգիտեմ միայն
քնիս մէջին մին բոմբ ու կոպիտ ձնեւ զար-
թեցայ, տեսի ճրագ դրած սենեակի մէջտեղն,
առաջևս արձանացած մի վիթխարի՝ կէս
վայրենի դէմքով՝ վայրագ նայուածքով

բարձրահասակ երիտասարդ, որին օգնում
էր նրա ամենամեծ զգալը և ձեռն բռնած
էր երկաթներից զամած հաստ երկար ցու-
պը: Նրա պատառիս և մորուսը, թաւ թաւ
յօնքերը, լայն երեսի մէջին փայլուն՝ պըս-
պղուն մեծ մեծ աչքերը ու երկար — մեծ
քիթը, ցոյց էին տալիս՝ որ բնութիւնը
խել էր նրանէ ամենայն մարդկային ձիւ-
քերը և մանաւանդ երբ նա արջի նման
ձայնում էր, Մութի, Մութի, սա է քոյ
խանը, սա հիւր շօնն է՝ որ խան ըլնի: Ես
ընդդէմ կամացս քնաթաթախ վեր թռայ
տեղէս ու սարսափահար ինչպէս ստուեր
պատին կայայ: Են իմ վայրկենական ահ-
ռելի վիճակը նա կարող է երեւակայել՝ ո՛վ
ոք կրել է ինձ նման աստանդական՝ թա-
փառիկ կեանք: Մութին նրա ձայնի վերայ
իսկ և իսկ ներս եկաւ, նշմարեց իմ ահն ու
երկիւղն, հասկացաւ վիճակս, սկսեց զօրո-
վական ժպիտով ասել, Ռաքէլ, Ռաքէլ,
առաջ հիւրին մին բարւով հազար բարի
ես եկած, կասեն, յետոյ էտէնց բաներ կա-
նեն: Ռաքէլն իսկոյն փոփոխուեցաւ, ինձ
զլետով արեց, որպէս թէ բարեւեց ու ժու-
տալով նստեց, ինձ էլ ձեռնով նշանացի
արեց նստել: Նստեցայ, բայց սրախ զրմ-
դմիտցն չէր անց կենում: Եյն ինչ նոքա
սկսեցին իւրեանց ծուռը մոռն՝ կոպիտ լե-
զուովն ինձ անհասկանալի հայերէն բար-
բառովը խօսել, և ահա տանտիկինը ու մի
երիտասարդուհի կարմիր փոշի բուփակով
երեսը ծածկած, մի երկար ու մեծ տէփուր
երկու կողմէն բռնած, ներս բերին, զրին
սենեակի մէջտեղումը ու իւրեանք զուրս
գնացին: Սա էր մեր ընթրիքը: Մերձ տանն
կերպ պատեղէն կերակրեղէն կային շարուած
տեփուրի վերայ, բոլորն էլ բանջարեղէն,

և որպէս միտքս է գտնիս, ըստ ասութեան
Մուքիի՝ անուանենք սոքա են, այս ինքն բոխ,
կապար, զոխ, սոխ, շուշան, ողորմակութի,
օրբելի, մին քանի տեսակ էլ թթուեղէն
էր։ Ըփսէքն էին յստակ, անագած, փլփր-
լուն սղոնձէ և բոլորի եղբրքումն զրաժ յիշա-
տակարաններ մեծ — մեծ հայ — տառերով։
Իսպէս զրաժ ամաններ առաջին անգամն էր՝
որ ես տեսնում էի։ Արանց ցքի ունենալն
էնքան ինձ չէր զարմացնում, որքան գինին,
որ մինչև տարւայ էն ժամանակն գեղացւոց
համար պահէին՝ դժուարին մին բան էր։
Մինչ այս մինչ այն՝ եկան հասան գեղե-
ծերունի քահանէն ու տանուտէրն և բազ-
մեցան ընթրիքի վերայ։ Որքան Շահի ըս-
պանութիւն ու նորա զօրաց ցրուիլն ոչ ինչ
արժողութիւն չունէր։ Ապքէլն առաջէն,
այնքան հետաքրքրական էր քահանային,
մանաւանդ տանուտրոջն (մելիքն), որոնք
մանրամասնաբար կը ցանկանային տեղեկա-
նալ։ Ապքէլն չգիտեմ խղճահարութենէ՞ն,
որ սկզբումն կոպտութեամբ վարուեց ինձ
հետ, թէ կարեկցութենէ՞ն և թէ բնական
բարեսրտութենէ՞ն, շարունակ աշխատում
էր այնուհետև ինձ հաճոյանալ, երբեմն
ուտակիք և երբեմն գինի համեցէք անելով։
Որքան սկզբումն զարհուրելի էր ինձ, էն-
քան գնալով գնալով դիւր և համոյր կե-
րեար, որով և ընտելացրեց զես ինքեան։
Ընթրիքէն յետոյ քահանէն ու Մելիքն
գնացին և մեք պառկեցինք փառաւոր ու
փափուկ, ինչպէս վայել էր գեղացւոյ, ան-
կողնումն քնեցինք։

Միւս օրը շուտով նախաճաշիկ արինք
ու դուրս գնացինք գեղէն, Ապքէլն ևս եր-
կար տեղ մեզ ճանապարհ ձգեց, և ապա
չնորհակալութիւն մատուցանելով նորա,

մնաս բարեւ ասելով հեռացանք նրանէ ու
ուրախ ուրախ զրուցելով մեր ուղին շա-
րունակեցինք։ Երևը մայր մտաւ, հասանք
մի քարանցաւի, մտինք ներս, որպէս զե-
նա պաշտպանէր մեզ ցրտէն ու քամիէն
կամ անձրեւէն։ Փոքր ինչ սպասելէն յե-
տոյ ընթրեցինք մեր հետ դրած պաշարեղե-
նէն, թեկն ընկանք քնեցինք շատ հանգիստ,
և առաւօտեան շատ շուտով զարթեցանք,
ճանապարհ ընկանք։ Արեկոյեան պահ էր,
բարձրացանք մի լեռան գլուխ, անտի վայր
իջանք նրա կողքովը, մտինք մի ձոր, բարձ-
րացանք դէպի վեր, հասինք Տաթև վանքի
գիւղն, ուր Մուքիի մեծ քոյրն ամուսնա-
ցած էր, մօտեցանք նրանց դրանը, մի երե-
խայ մեզ տեսնելուն պէս՝ վազեց ներս մը-
տաւ, և ահա մի չափահաս կին դուրս ե-
կաւ, Մուքի, Մուքի ասելով, զրկեց նրան,
լացով (ի հարկէ յուրախութենէն) փա-
թաթուեց նրա շնքովը, ներս տարաւ տուն,
և ես մնայի դրանը կանգնած։ Վեղացիներ
ի մին զմինը անկեղծ և սիրախառն բարե-
ւելն, զրկելն ու համբուրելն և ևս զգալի է
և աւելի քաղցր քան զթէ քաղաքացիները։
Փոքր ինչ անցաւ, մի զառամեալ ա-
լեզարդ ծերունի, յեցած զաւաղանի վերայ
դուրս եկաւ տանէն, հրաւիրեց զես ներս
դնալ ու հանգստանալ իւր ցոյց տուած
սննեակումն։ Մի և նոյն երեխայն քանի
մի անգամ վազէվազ տուն ու դուրս արաւ
և ահա գեղացիների ծայրը սիսեց բացուիլ,
մի մի, երկու երկու ծերեր կամ չափահաս-
ներ եկին, մարդասիրութեամբ ինձ բարեւե-
լէն յետոյ շարունեցան, փառաւոր բազմե-
ցան և սկսեցին զրոյցներ բանալ Շահի և
նրա զօրաց անխրաւութիւնների վերայ։
Չարմանալի հակակրօթիւն էին ցոյց տա-

լիս ամենայն տեղ Շահի անձնաւորութեանն, թէև երբեք չէին տեսած զնա, և ոչ մինի բերանէն մի բառ նրա օգտի մասին չէի լսում, և երբեք նրան Շահ չէին անուանում, այլ միշտ Ախտայ խան, այսինքն ներքինի խան կամ Աղայ Մամադ խան:

Եւ տեղ միայնակեացը կանգ առաւ, և եւ նշմարեցի որ նա յօքնել է և չի պէտք է շարունակել իւր պատմութիւնը, վասնորոյ և յառաջեցի ասելով, «այր՝ էս օրումն պատմելդ կարի երկար էր և ձեզ շատ ներդութիւն եղաւ, ու սկսեցի թխթերս ժողովել՝ ըստ սովորութեանս մնաս բարեւ ասելով, զուրս գալ քարանցաւէն և շարունակել ընթացքս դէպ ի սուրբ՝ Աստավկայի վանքն, ուր շուտ շուտ ձաշելէս յետոյ, կրկնեցի կարգալ քարանցաւի մէջն գրածներս, և ինչ ինչ տեղ՝ որ անընթեռնի կամ անհասկանալի էին, էնտեղ շտապելէս զրաճներս, գծել, որպէս զի միւս օրը կրկին հարցնեմ և ուզեմ:

Արովհետեւ միայնակեացի պատմութիւնն զեւ ևս չէր վերջացած և չգիտէի ևս որքան օր և ևս կը շարունակուի, ուստի ուղեկիցներէս երեք օր ժամանակ խնդրեցի սպասեն անդ: Եւ ևս միւս օրը կրկին առաւօտեան բարձրացայ Մաղարթի լեռու, հասայ քարանցաւի զուռ, տեսի միայնակեացն արդէն որպէս պատրաստ որ: Ինչ էր սպասում, ըստ սովորութեանս օղջունեցի, նստեցայ ու թուխթ — մեխնա հանեցի ու պատրաստուեցայ զրել: «Աս ժըպտալով պսեց, մտիւ է ուրեմ՝ թողել քեզ երկն, և կամեցաւ շարունակել, եւ ընդմիջեցի նորա խօսքն, որպէս զի սպասէ մինչև ուզելմ՝ երկկան նրա պատմածները, ուր

որ չէի հասկացած կամ թէ գրածս չէի կարողանում ընթեռնուլ: «Աս ծիծաղելով ընդունեց առաջարկութիւնս, զոր վերջացրեցիս յետոյ, սկսեց նա պատմութեան թեկն:

Տաթևի գեղումն, որպէս երկն պատմեցի, քնեցայ հանգիստ, միւս օրը առաւօտեան աչքերս բացի, տեսայ Մուքին հագնուած՝ պատրաստ նստած էր քովս, ասեց՝ խան, ինչ լաւ քաղցր ես քնած, վեր կաց զնանք վանքն, էս օր ասումեն սուրբի տօն է և պատարագ կայ էնտեղ, շտապեց որ էն սուրբ պատարագին արժանանանք:

Ինչ դժուար հագնելոյ շորեր ունէի, — մին թիկնոց (արխալուղ) երկու կոճակներով, կապէս երեք չորս կոճակներով, գրպա արդէն գլուխն էի քնած, մնացել էր ուրեմն ոտնամաներս, — բոլորն երկու բովալուսն հագայ, երես շուտով լուացի, խաչակնքեցի քանի մի անգամ ու յայտնեցի պատրաստ լինելս: «Աս ընկաւ առաջ և եւ քամակին, վռաղելով զնացինք դէպ ի վանքն, մտինք սուրբ եկեղեցին, պատարագն սկսած էր արդէն: Եւ որդեակ, չունիմ էն ճարտար լեզուն, որով կարողանայի հաղորդել քեզ թէ, էն հոյակապ վանքումն, շատ հոգեորականաց ներկայութեանն, էն ահեղ և սուրբ խորհուրդն ինչ մտիթարար ներգործութիւն ազգեց հոգւոյս վերայ: Եւ երկրորդ անգամն էր կենացս մէջն, իմ հանդիսաւոր պատարագ տեսնելն: Առաջինն՝ որպէս պատմած եմ քեզ, սուրբ Աջմիածնի մէջն, ուր ահէս չէի կարողանում ինչպէս մի քրքրատունայ արձակ — համարձակ աղօթել, բայց էստեղ այնպէս չէր: Այժմ՝ ոչոքից չէի երկնում, չէի ճնշուած հոսանուտ բաղդէն, այլ զրկուած ամենայն աշխարհա-

յին փառքէս ու կայքէս, որոնց վերստա-
նալոյ յոյս ևս չունէի, վասն որոյ և վե-
րացեալ մօռք՝ ազատ հոգեով՝ ոչ աջ և
ոչ ահեակ նայելով, աչքերս զէպ ի սուրբ
սեղանն յեռած, ջերմեռանդութեամբ ար-
ձանացած՝ կնիգօթէի և առատ արտասու-
քնն էլ աչքերէս կը հոսէին, այն ինչ՝ Մու-
քին զին բրթեց թէ ժամասացութիւնը վեր-
ջացաւ, արի՛ գնանք։ Բնագան ուրեմն քս-
թափեցայ, չորս կողմն նայեցի, ամենեքեան
ինձ էին նկատում, ուստի և ես անխօս ան-
բարբառ և կորիզուիս հեռեցայ ուղեկ-
ցիս, նախ սուրբ Աւետարանն և ապա սե-
ղանն ու քանի մի տէրունական պատկեր-
ներ համբուրելէն յետոյ դուրս եկինք։ Այս
ինձ յիշատիստեամ, ուրիշ մարմին և ուրիշ
հոգի ստացած կրգայի։ Միտոս շատ ու-
րախ էր և որպէս թէ ոչինչ վիշտ՝ ոչ-
ինչ նեղութիւն չէի կրած և ներկայ տխուր
վիճակիս վերայ մտածելն վերացաւ յիշո-
ղութնէս։ Ժողովուրդի անկեղծութեամբ
եկեղեցւոյ մէջն սուրբերի առաջէն ծնկած
կամ կանգնած ջերմեռանդութեամբ աղօ-
թելն, ստէպ ստէպ խաչակնքելն և դուրս
գալոյ ժամանակն ոմանց աւետարան, ոմանց
սեղան, ոմանց եկեղեցւոյ դռներն, ոմանց
հոգեորականների աջը համբուրելը, նոյն-
պէս ընդարձակ՝ սայայատակ՝ հարթ հա-
ւասար՝ մաքուր դաւթումը հոգեորական-
ների սև շորերով գլխերնին խոնարհա-
ցրած՝ աչքերնին ցածր յեռած ոչ աջ՝ ոչ
ահեակ նայելն, ոմանք նոցանէ վեղարով
ոմանք այլեմն նոցա պատկանեալ տարազ
զգականերով, պարկեշտութեամբ մին զմինը
ողջունելն և լուռ մունջ ուղղակի գնալն,
մոնելն իւրեանց խուցերն, ուշ ու միտքս
կնպէս զբաւեցին, որ իսկ և իսկ՝ յանկարծ

ծնեց մտքումս մի անակնուշիկ դադարար,
այս ինքն, երանի՛ թէ և ևս հրաժարուէի
աշխարհիս ունայն կեանքէն և մոնէի նոցա
կարդն, որով կարողանայի քաւել անցած
գնացած մեղքերս ու մաքրել խղճմտանքս,
որ միշտ ի ներքուստ կը տանջէր զես և կը
կրճէր սիրտս։

Մուքին դաւթի մէջն ինչ հոգեորա-
կանի պատահում էր՝ անխափր նոցա աջն
էր առնում, ևս ևս նրան էի հետևում, ի
վերջոյ մտնէք մին խուց, ուր բազմած էր
ալեգարդ ծերունի վարդապետ ոմն, որի աջն
համբուրելէն յետոյ, հրամայեց մեզ նքս-
տել։ Աւարդապետն նախ հարցրեց ուղեկ-
ցիս ընտանեաց ողջութենէն և ապա զեղե-
քահանայի՝ մեյքի և ոմանց ինքեան ծա-
նօթներէն զինի թէ, ով է ուղեկիցդ։ Մու-
քին կիսատ պուտտ ճառեց ով լինելս և
ուստի՛ զայս։ Աւարդապետը զիմեց ինձ
հարցնելով, մեք ևս երեկ գիշերն բեցինք
սորա նորա բերանէն Շահի սպանուելոյ
լուրն, բայց անստոյգ էինք համարում, ու-
րեմն դու որպէս ականատես, ասա խնդրեմ
ճշմարիտ է արդեօք։ Այս պատասխանեցի,
այո՛ ճշմարիտ է հայր սուրբ։ Աւրեմն, կրկ-
նեց վարդապետն, էս լուրն շատ հարկաւոր
է հազարդել սրբազանին, խնդրեմ սպա-
սէ՛ք այս տեղ՝ մինչև ևս գնամ ծանուցա-
նեմ սրբազանին, և անշուշտ ձեզ կը հրա-
ւիրէ գնալ իւրեան մօտ, կամենաք դալն։
Այս վերապատասխանեցի, պատրաստ եմ
հայր սուրբ։ Աւարդապետն իսկ և իսկ զը-
նաց, քառորդ ժամ թերեւս անցաւ և ահա
մի տիրացու եկաւ մեզ առաջնորդեց զէպ ի
առաջնորդարանն, որի դրանը մինչև տասն
փանականներ, տիրացուներ և աշխարհա-
կաններ կային, լսում էինք, բոլորեքեան էլ

էս իմ բերած համբաւի վերայ կը զըռցէին: Անքա մտինք առաջնորդարանն, անցինք երկու սենեակներ, որոնք զարդարուած էին Պարսկաստանի ընտիր զորքերով, ժամանեցանք երրորդ սենեակն, ուր ամենէն բարձր բազմած էր սրբազանը, փափուկ՝ բարձր ներքնակի վերայ և նորա ղեմ՝ յանդիման երեք ծերունի վարդապետներ բաց ի մեր ասպնջականէն. բոլորի աջը համբուրելով, վայրկենաչափ ոտի վերայ կանգնեցինք. սրբազանն մեզ բարուով հազար բարի եկաք ասելէն յետոյ, հրամայեց նստինք: Խորին լռութիւնը տիրեց քանի մի բովայլ և ապա սրբազանն կցեց, ուստի՛ նմ գալիս և ճշմարիտ է արդեօք բռնաւորի սպանուիլն և թէ ինչպէս և երբ պատահեցաւ էս անցքն: Եւ համառօտութեամբ որքան և կարողացայ պատմեցի: Ակատում էի, որ նա կամ լուրերին կամ իմ պաշտօնատար լինելոյս հաւատ չէր ընծայում, ըստ որում շատ ոլոր մոլոր հարցեր էր ինձ առաջարկում, և մանաւանդ աշխատում էր իւր ներսնային համոզմունքն, կամ լաւ ևս ասած հակակրօթիւնը ընդդէմ Շահին յայտնել, ուստի և ցոյց էր տալիս ինքեան անտարբեր: Ահա սորա համար և ես առ ի միամտացնել զնա, պատմեցի իմ գնալն Էջմիածին սրանէ, քանի մի տարի առաջ հրամանաւ Սարգարի, ինչպէս ինձ այն տեղ ընդունիլը Պաթուղիկոսի, անցեալ տարի Շահին կամ բռնաւորի հետ (որպէս նա կանուանէր զՇահն)՝ Արարազ գալս, Պաթուղիկոսի առաքած ընծաները ներկայացնելս բռնաւորին, Թիֆլիսի աւերմանը ներկայ լինելս և այլն և այլն: Եւ յնուհեան նշմարեցի նրա խօսակցութենէն որ, թէ և ոչ բոլորովն, այլ զոնէ մասամբ փոխեց նա իւր

կարծիքն ու գուն էր գործում միեւթաբել զես զանազան յոյսեր տալով: Ի վերջոյ աջը համբուրելով ուղեցինք զուրս գալ, ասեց նա, Յակօր վարդապետ (էս էր մեր ծանօթի անունն), էս հիւրերը տար քո խուցը, անդ միասին ծաշէք:

Յակօր վարդապետի խցումը շատ թէ փոքր ժամանակ կացինք, և ահա մի տիրացու ներս բերաւ մի կապոց դրեց առաջ ևս ասելով, «Արբազանն էս ուղարկեց ձեզ համար եւ ներումը խնդրեց, որ կթէ և ձեզ արժանի ևս չլինին էս շորերն, այսու ամենայնիւ էսպէս նեղ ժամանակը էսքանով բաւականանաք առայժմ»: Յակօր հայր սուրբը բացեց կապոցը, մի ձեռք շոր էր, ամեն բանովը, մինչև անգամ զուլպայ, ոտնամանն ևս, և ինձ հրաւիրեց մանել միւս սենեակը, փոխել հագուստ: Անտի զուրս եկի վարդապետի աջը համբուրեցի ու խնդրեցի տիրացուին իմ շնորհակալութիւնը մատուցանել սրբազան առաջնորդին: Զից միջոց չանցաւ և ահա մի և նոյն տիրացուի առաջնորդելովն, երկու սպասաւորներ մեզ համար ծաշ բերին: Ճաշէն յետոյ Սուքին իմ հին շորերն, այս ինքն իւրեանց զիւղումը հազցրածները, փաթաթեց ու կռան տակը դրած՝ միասին եկինք նրա ազգականի այս ինքն ասպնջականի տունը:

(Ծ-Բ-Ն-Է-Է)

ԳԱԼՈՒՍ ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ.

